00 SEP 2010

ԽՄԲԱԳԻՐ-ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

Տիգրան Նազարեան

ՏԻԳՐԱՆ

Rédacteur en chef et Directeur

Figran Nazarian

ԹԻՖԼԻՍ № 11 ՆՈՅԵՄԲԵՐ XXIII—1912 *Tiflis*

Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոս Տ. Տ. ԳԷՈՐԳ V-րդ շքախմբով
Օշականում շրջապատած պատգամաւորներով

13 հոկտ. 1912 թ. Յատկապէս Տարազի համար լուսանկարեց Հ. Գաբրիէլեան վարդապետը։

Այս խմբանկարի մէջն են՝ Վեհափառ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԷՈՐԳ V, Բեսարաբիայի, Վրաստանի եւ Իմէրէթի, Ղարաբաղի, Շամախու, Երեւանի թեմերի առաջնորդները, Էջմիածնայ միաբանութիւնը, թեմական դպրոցների տեսուչները, Ճեմարանի ուսուցչապետները, պատգամաւոր եկած խմբագիրներ, գրականագէտներ, հասարակական գործիչներ, եւ օշականցիներ։

Ռուսահայութեան մտաւոր կենդրոն Թիֆլիսում, Աղբիւր-Տարազի Գրական-Գեղագիտական Սալոնը հոկտ. 12-ին մեծաշուք հանդիսով կատարեց հայ տառի 1500-ամեակի և հայ տպագրութեան 400-ամեայ համազգային-քաղաքակրթական մեծ յօբելեանի նախատօնակը։

Ներկայ էին անխտիր թէ հայ և թէ օտարազգի արուեստագէտներ, գրականագէտներ, գեղագէտներ, ինչպէս և մեծ բազմութիւն հասարակական-դպրոցական գործիչների ու ներկայացուցիչներ զանազան հաստատութիւնների։

Այս ուշագրաւ և նշանակալից հանդիսի մանրամասնութիւնները հետևեալ անգամ։